# «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումը

2012 թվականի օգոստոսի 9-ին կայացել է «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստ:

Ստորև ներկայացվում է խորհրդի կողմից ընդունված որոշումը (խորհրդի արձանագրությունը կազմվել է 09.08.2012թ.-ին):

Վ. Բեգլարյան Գլխավոր Տնօրեն, Տնօրենների Խորհրդի անդամ

(ստորագրություն)

10.08.2012թ.

««ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«09» օգոստոսի 2012 թ. N 3-2012/03

ք.Ստեփանակերտ

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՄՆ ԴՈԼԱՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՈՉ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի 84 հոդվածի 1-ին մասի «է» ենթակետը, 61 հոդվածի 1-ին մասը, «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ կանոնադրության 12.5. կետի «բ» ենթակետը և «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների Խորհրդի 09.08.2012թ. նիստի թիվ 3-2012 արձանագրությունը, ինչպես նաև ելնելով «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ գործունեության բնականոն զարգացման անհրաժեշտությունից՝ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Տնօրենների Խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թողարկել մինչև 8,000,000 (ութ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, մինչև 800 (ութ հարյուր) հատ, 10,000 (տասը հազար) ԱՄՆ դոլար անվանական արժեքով ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսեր

2. Հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի մինչև 8,000,000 (ութ միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, մինչև 800 (ութ հարյուր) հատ ոչ փաստաթղթային անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմանները՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

3. Հանձնարարել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ Գլխավոր տնօրենին ապահովել պարտատոմսերի տեղաբաշխման նախապատրաստական աշխատանքների իրականացումը, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձի («ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ) հետ «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ պարտատոմսերի տեղաբաշխման կազմակերպման նպատակով համապատասխան պայմանագրի կնքումը, պարտատոմսերի ազդագրի մշակումը և ՀՀ կենտրոնական բանկում օրենքով սահմանված կարգով գրանցումը, տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի տեղաբաշխմանն առնչվող այլ գործողությունների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի օգոստոսի 9-ից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԹԵՎՈՍՅԱՆ